այն երջանիկ օրին, երբ իրենք նորից զէնքի պիտի հրաւիրուէին՝ յանուն հայրենի ազատութեան իրենց անձերը զոհաբերելու համար:

Քաղաքական պայմանները նորից շուտով փոխուում են: Պարսկաստանի զօրացումը դիսաւոր ատաղի նման մի բան էր: Նադիրի փառքը երկար չի տեւում. դառնալով ասիական մի զարհուրելի բռնակալ, մարդասպանի սուրը շուտով վերջ է դնում նրա կեանքին, որի հետ միասին վերսկսւում է Պարսկաստանի թուլութիւնն ու քայքայումը, այն էլ շատ մեծ ու արագ քայլերով, քան առաջ:

Դրա հետ միասին՝ նորից յարութիւն է առնում ու բոցավառւում Հայաստանի անկախութեան տենչը, որ ընդհանրապէս շատ մեծ կախում ունէր Պարսկաստանի ներքին վիճակից եւ ռուսների վերաբերմունքից: Կրկին նոր յոյսեր, նոր ակնկալութիւններ, նոր զոհաբերութիւններ ու նոր ջանքեր:

Բայց այս անգամ գործի ազդակն ու հրահրողը մայր երկրից դուրս է, Հնդկաստանի հայերն են:

Նրանցից մէկը, Էմին Յովսէփեան անունով մի պատրաստուած հայրենասէր, կարծէք, փորձում է նորից կրկնել Օրիի պատմութիւնը: 1760 թ. անցնում է Պետերբուրգ եւ առաջարկում ռուսաց կառավարութեան՝ նորից ձեռք առնել Հայաստանի ազատագրութեան գործը: Եկատերինա Պետրովնայի կառավարութիւնը, որ ոչ ժամանակ, ոչ էլ ցանկութիւն ունէր հայերով զբաղուելու, նորից հրապարակ է բերում ռուսական հին քաղաքականութիւնը — ձգձգման, սին խոստումների ու խաբեայութեան քաղաքականութիւնը:

Արդի՞ւնքը...նորից զրոյ:

Էմին Յովսէփեանը բացառութիւն չէր: Նա մի զեղեցիկ նմոյշն է միայն հնդկահայ մեծատունի, որի բնաւորութեան ամենախոշոր գծերից մէկն է մաքուր եւ ջերմ ազգասիրութիւնը: Հայութիւնն ընդհանրապէս եւ հայրենիքն ու նրա մէջ ծուարուած ժողովուրդը մասնաւորապէս միշտ էլ եղել են հնդկահայ մեծատունի մտահոգութեան գլխաւոր առարկան: Նա միշտ էլ ջերմ արձագանգ է տուել եւ առատօրէն նուիրաբերել ամէն մի ձեռնարկի, որ այսպէս կամ այնպէս առնչութիւն է ունեցել հայրենիքի կամ հայ ժողովրդի հետ: Իհարկէ, նրանց շարքերում էլ եղել են վատերը, անպիտանները, սակայն հնդկահայ մեծատունի տիպը, բարեբախտաբար, նրանք չեն:

Ահաւասիկ մէկ ուրիշ հնդկահայ մեծատուն՝ Պետրոս Ոսկանեան: Սա ոչ միայն մի խոշոր գումար է յատկացնում մի շարք մշակոյթային ձեռնարկութիւնների իր հայրենի Նոր-Ջուղայում, այլ եւ կտակում է, որ մահից յետոյ, իր սիրտը հանեն եւ տանեն թաղեն իր ծննդավայրում:

Սիմէոն կաթողիկոսի տպարանը եւ թղթի գործարանը էջմիածնում, որ այն ժամանակներում, Հայաստանի նման մի երկրի համար, կարող էին հրաշք նկատուել, մի հնդկահայ վաճառականի մեծագործութեան արդիւնքն էին:

Յովսէփ արքեպիսկոպոս Արղութեանը հնդկահայութեան առատ նուէրներովն էր, որ դլուխ էր բերում իր բազմաթիւ ու մեծածախս ձեռնարկները — հայկական նոր քաղաքների հիմնումն Ռուսաստանում, դպրոցներ, եկեղեցիներ, տպարաններ եւն.:

Մուրադ-Ռաֆայէլեան վարժարանը հնդկահայ մեծատունի ազգասիրութեան կոթողներից մէկն էր:

Այսպէս կարելի էր դեռ երկար շարունակել հնդկահայ գաղութի — որ ի դէպ՝ այնքան էլ մեծ չէր, ըստ ոմանց՝ ընդամէնը 150 տուն, 1829 թուին — ազգային-հասարակական սրբագործութիւնների շղթան. սակայն կարծում ենք, այսքանն էլ բաւական է ցոյց տալու համար, թէ յիրաւի, ո՞րքան զօրեղ եւ բուռն էր ազգասիրութեան զգացմունքը հնդկահայի սրտում:

Բայց անհրաժեշտ ենք համարում այդ շղթան փակել հետեւեալ փայլուն եւ յուշիչ օրինակով.—

Եդուարդ Ռաֆայէլը — Մուրադ-Ռաֆայէլեան վարժարանի հիմնադիրներից մէկը — իր երկու որդիներին ուղարկում է Լոնտոն ուսանելու, նրանց ուսուցիչ-դաստիարակ կարգելով Նիկ. վարդապետ Բուդայեանին: Իր հայրական խրատների մէջ Եդուարդը գրում է որդիներին. «Հնազանդ եղէ՛ք Հ. Նիկողայոս վարդապետին, որ կարգուած է ձեզ ուսուցիչ եւ դաստիարակ: Նա կը կրթէ ձեզ